

Պաշխի կամ Չարչարանաց յիշատակներուն աւանդութիւններէն մէկ քանին արդէն գրեցինք. մնացեալներն ալ պիտի նշանակենք ստորեւ, սկսելով Ս. Յարութեան Տաճարէն, ըստ այցելութեան ուխտաւորաց. Չարչարանքներու Ս. Տեղեաց աւանդութիւնները աւարտելէ վերջ, պիտի շարունակենք մինչև Ս. Աստուածածնի Տաճարը և շրջակայքը:

1. Սիւն դասավնոի. — Ս. Յարութեան արևելեան փոքր դռնէն անցնելով՝ Ս. Պետրոսի կարծեցեալ բանտին մօտէն (այժմ դապախանա), պէտք է երթալ հիւսիսային կողմը, մութ շուկան, որու երկու կողմերը սրբատաշ քարերով խանութներ շինուած են, բայց աւերակներ են և մթազոյն: Այս փողոցին հիւսիսային ծայրը չորեքդիմի ճանապարհ մը կայ, և արևմտեան կողմն ալ աւերակ կամար մը: Այս է վճռի դուռը, եւ աւանդաբար այսպէս կ'ըսուի թէ դատապարտեալներուն և չարագործներուն վճիռները հոս կը տրուէին, ուստի Քրիստոսի մահուան վճիռը հոս տրուած է, որուն իբրև նշան տակաւին կ'երևի սիւն մը, և որուն գլուխը դիմին Տիրոջ վճիռը, այսինքն «գսիճիլն թէ մահապարտ է»: Եւ ճշմարտիւ այս դուռը առաջին քաղաքին եզրը ըլլալով՝ ուր կ'ըսուի թէ՛ հանեալ զնա արտաքոյ քաղաքին, ասկէ կ'ելլէին Պողոթա՝ որ տեղն էր մահապարտները կառափելու արտաքոյ քաղաքին (Հան. էջ 222-23, Արծ. 164-65):

2. Մբուհի Վերոնիփայի եկեղեցին. — Դատաստանի դռնէն դէպի աջ կողմի ճանապարհին մէջ յառաջանալով 60 մէթրի չափ, աջ թևին վրայ պատին մէջ տեղաւորուած սիւն մը կ'երևի. այս տեղւոյն հա-